

**ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀԿՓԲԸ-ԳՀԾՁԲ-20/01»**

ք. Երևան

«14» փետրվարի 2020թ.

«ՀԱՏՈՒԿ ԿԱՊ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ Ղասաբողյանի, որը գործում է «ՀԱՏՈՒԿ ԿԱՊ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Միքայելյանի, որը գործում է «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոտեխսպասարկման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին 5 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանշվում

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

«ՀԱՏՈՒԿ ԿԱՊ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան Չարենցի փ 4/129

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 2052822133751001

ՀՎՀՀ 02509254

Տնօրեն՝ Մ. Ղասաբոլյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան Արա Սարգսյան 4

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 1570023314500100

ՀՎՀՀ 01269447

Տնօրեն՝ Կարեն Միքայելյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ* **

ՀՀ դրամ

Ծառայության						
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) – 5011130/501						
չափաբաժնի համարը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը**
1	Կատարողը պետք է ունենա անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, այդ թվում՝ - սպասարկման տարածքում ավտոպահեստամասերի պահեստի կամ խանութի առկայություն, - պետք է ունենա վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (ընթացամասի, էլեկտրականության, յուղման, անվաբացքի կարգավորման, վոլկանացման, ինժեկտորի վերանորոգման, դեկային մասի, շարժիչի, փոխանցման տուփի և կամրջակների վերանորոգման, մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև՝ զոդման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն), - Կատարողը պետք է ունենա 2 (երկու) հատ էլ. ամբարձիչ, առնվազն 2,5 տոննա բարձրացնելու հնարավորությամբ (домкрат), - Կատարողը պետք է ունենա առնվազն թվով 3 (երեք) ավտոմեքենայի համար նախատեսված կայանման (պահպանման) վայր, ընդ որում ավտոմեքենաների այնտեղ գտնվելու ամբողջ ընթացքում՝ Կատարողի կողմից պետք է իրականացվի շուրջօրյա (24 ժամ) տեսահսկում ապահովելով իրականացված տեսաձայնագրության առնվազն 30 (երեսուն) օրվա պահպանություն, որը պահանջի դեպքում 1(մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվի Պատվիրատուին: Պատվիրատուի ավտոմեքենան տեխնիկական սպասարկման կայան ժամանելուց հետո Կատարողը պետք է ապահովի ավտոմեքենայի արտահերթ սպասարկում՝ ժամանելու պահից առավելագույնը 30 (երեսուն) րոպե հետո, որից անմիջապես հետո Կատարողը մեկ ժամվա ընթացքում պետք է ապահովի ավտոմեքենայի ախտորոշումը՝ տրամադրելով ավտոմեքենայի վրա իրականացվելիք աշխատանքների, երաշխիքների, դրանց կատարման ժամկետների մասին տեղեկանք (տեղեկանքում ներառվող ծառայությունները պետք է համապատասխանեն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ցանկին՝ SU 1, SU 2), ընդ որում՝ աշխատանքների կատարման ավարտի համար նախատեսված առավելագույն ժամկետը չի կարող ավել լինել 2 օրից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը Պատվիրատուին տրամադրում է տեղեկանք-հիմնավորում ծառայությունների մատուցումը 2 (երկու) օր անհնարին լինելու վերաբերյալ, որի մասով Պատվիրատուի կողմից սահմանվում է ծառայությունների մատուցման խելամիտ ժամկետ: Ավտոմեքենան տեխնիկական կայան ժամանելուց առավելագույնը 1(մեկ) ժամ 30(երեսուն) րոպե հետո, պետք է սկսվի ավտոմեքենայի սպասարկման գործընթացը (ծառայությունների մատուցումը): Կատարողը ՀՀ ողջ տարածքում պետք է ապահովի ավտոմեքենայի տեղափոխումը տեխսպասարկման կենտրոն ավտոբարձակի միջոցով, ընդ որում՝ հնարավորության դեպքում ավտոտեխսպասարկումը նաև կարող է իրականացվել տեղում առանց ավտոմեքենան տեխսպասարկման կայան հասցնելու: Կատարողը պետք է կարողանա միաժամանակ սպասարկել թվով 3 (երեք) ավտոմեքենա և իրականացնել աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին շուրջօրյա (24ժամ) սպասարկում, ընդ որում՝ Կատարողը ՀՀ բոլոր մարզերում պետք է ունենա ավտոտեխսպասարկման կայաններ կամ այլ	դրամ	1000000	1	ք. Երևան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ.

	ավտոտեխսպասարկում ՀՀ բոլոր մարզերում: Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին: Ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան: Երաշխիքներ՝ կատարված աշխատանքներ համար 6 ամիս, պահեստամասերի համար 6 ամիս, ռետինե դետալների համար 6 ամիս: Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:				
--	--	--	--	--	--

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	1 ՉԱՓԱԲԱԺԻՆ		
		Daewoo Nexia -2 հատ, առջևի քաշող, թեթև մարդատար, 5 տեղանոց, երկուսն էլ 2008 թվ. Արտադրության, փոխանցման տուփը մեխանիկական	Opel Astra G -2 հատ, առջևի քաշող, թեթև մարդատար, 5 տեղանոց, 2003 թվ. և 1999 թվ. Արտադրության, փոխանցման տուփը մեխանիկական	BA3 2107 -1 հատ, ետևի քաշող, թեթև մարդատար, 5 տեղանոց, 2008 թվ. Արտադրության, փոխանցման տուփը մեխանիկական
1	2	3	4	5
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում	Այլ պետությունների արտադրության մեքենաներ		
1	Բռնկման համակարգի ստուգում	1,627	1,627	1,627
2	Սառեցման համակարգի ստուգում	1,627	1,627	1,627
3	Յուղման համակարգի ստուգում	1,627	1,627	1,627
4	Արտացման համակարգի ստուգում	1,627	1,627	1,627
5	Կցորդման համակարգի ստուգում	1,627	1,627	1,627
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
13	ABS համակարգի ստուգում	1,627	1,627	1,627
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
15	Դեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1,627	1,627	1,627
16	Թափքի վիճակի ստուգում	1,627	1,627	1,627
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1,627	1,627	1,627
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը	0	0	0
	1.Շարժիչ	0	0	0
18	Շարժիչի հանում և տեղադրում	32,548	32,548	32,548
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	32,548	32,548	32,548
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	32,548	32,548	32,548
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	32,548	32,548	32,548
22	Շարժիչի մասնակի ստուգում	16,274	16,274	16,274
23	Շարժիչի վերանորոգում	108,492	108,492	108,492
24	Նույնը DOHC դեպքում	108,492	108,492	108,492
25	Նույնը V6-ի դեպքում	108,492	108,492	108,492
26	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	4,340	4,340	4,340
27	Բլոկի հղկում	16,274	16,274	16,274
28	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	5,425	5,425	5,425
29	Նույնը աջի համար (V6)	5,425	5,425	5,425
30	Նույնը ձախի համար (V6)	5,425	5,425	5,425
31	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	21,698	21,698	21,698
32	Նույնը առի համար (V6)			

34	Շարժիչի գլխիկի վերանորոգում	21,698	21,698	21,698
35	Փականի խցուկի փոխարինում	10,849	10,849	10,849
36	Նույնը V6-ի դեպքում	5,425	5,425	5,425
37	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	5,425	5,425	5,425
38	Նույնը V6-ի ձախի դեպքում	5,425	5,425	5,425
39	Նույնը V6-ի աջի դեպքում	5,425	5,425	5,425
40	Նույնը DOHC դեպքում	5,425	5,425	5,425
41	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	5,425	5,425	5,425
42	Հրիչների փոխարինում SOHC	5,425	5,425	5,425
43	Նույնը DOHC դեպքում	5,425	5,425	5,425
44	Ատամնավոր փոկի փոխարինում	16,274	16,274	16,274
45	Նույնը DOHC դեպքում	16,274	16,274	16,274
46	Նույնը V6-ի դեպքում	16,274	16,274	16,274
47	Ծնկած և լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5,425	5,425	5,425
48	Նույնը կոնդիցիոների դեպքում	5,425	5,425	5,425
49	Նույնը DOHC դեպքում	5,425	5,425	5,425
50	Նույնը կոնդիցիոների դեպքում	5,425	5,425	5,425
51	Նույնը V6-ի դեպքում	5,425	5,425	5,425
52	Նույնը կոնդիցիոների դեպքում	5,425	5,425	5,425
53	Ծնկած և լիսեռի հետևի խցուկի փոխարինում	21,698	21,698	21,698
54	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	21,698	21,698	21,698
55	Մխոցային օդակների փոխարինում	21,698	21,698	21,698
56	Նույնը DOHC դեպքում	21,698	21,698	21,698
57	Նույնը V6-ի դեպքում	5,425	5,425	5,425
58	Թափանիվի հանում և տեղադրում	16,274	16,274	16,274
59	Թափանիվի պսակի փոխարինում	16,274	16,274	16,274
60	Խցիկի զտիչի փոխարինում	1,627	1,627	1,627
	2. Դեկավարման, սնման և յուղման համակարգ	0	0	0
61	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	542	542	542
62	Յուղի պոմպի փոխարինում	6,510	6,510	6,510
63	Նույնը DOHC դեպքում	6,510	6,510	6,510
64	Նույնը V6-ի դեպքում	6,510	6,510	6,510
65	Համակարգչային ախտորոշում	2,712	2,712	2,712
66	Դեկավարման բլոկի վերանորոգում	13,562	13,562	13,562
67	Բռնկման կարգավորում	3,255	3,255	3,255
68	Պարապ ընթացքի կարգավորում	3,255	3,255	3,255
69	CO կարգավորում	3,255	3,255	3,255
70	Խարնարակի հանում և տեղադրում	0	0	0
71	Խարնարակի վերանորոգում	0	0	0
72	Օդի զտիչի փոխարինում	542	542	542
73	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	1,627	1,627	1,627
74	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	2,712	2,712	2,712
75	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	4,340	4,340	4,340
76	Բենզամղիչի փոխարինում	4,340	4,340	4,340
77	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի մաքրում	4,340	4,340	4,340
78	Վառելիքի զտիչի փոխարինում	2,712	2,712	2,712
79	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	8,137	8,137	8,137
80	Վառելիքի մղիչի կարգավորում	542	542	542
81	Ընթացքային մասի յուղում	1,627	1,627	1,627
82	Ներծծող վառելիքի պոմպի փոխարինում	1,627	1,627	1,627
83	Տրամյորի հանում և տեղադրում	542	542	542
84	Տրամյորի վերանորոգում	542	542	542
	3. Սառեցման և արտաժման համակարգ	0	0	0
85	Հովհարի փոկի հանում և տեղադրում	2,170	2,170	2,170
86	Կոնդիցիոների փոկի փոխարինում	2,170	2,170	2,170
87	Հովհարի հանում և տեղադրում	4,340	4,340	4,340
88	Ռադիատորի հանում և տեղադրում	6,510	6,510	6,510
89	Նույնը կոնդիցիոների դեպքում	6,510	6,510	6,510
90	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	6,510	6,510	6,510
91	Ռադիատորի վերանորոգում	16,274	16,274	16,274
92	Անտիֆրիզի փոխարինում	1,085	1,085	1,085

95	Սառեցման համակարգի օդհանում	1,085	1,085	1,085
96	Ջրի պոմպի փոխարինում	10,849	10,849	10,849
97	Ջրի պոմպի վերանորոգում	0	0	0
98	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	0	0
99	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
100	Գեներատորի փոկի փոխարինքում	2,170	2,170	2,170
101	Գեներատորի փոկի ձգող իռլովակի փոխարինքում	4,340	4,340	4,340
102	Ընդարձակող բաքի փոխարինում	1,627	1,627	1,627
103	Խլարարի հանում և տեղադրում	4,340	4,340	4,340
104	Նույնը DOHC դեպքում	4,340	4,340	4,340
105	Խլարարի գոֆրայի փոխարինում	4,340	4,340	4,340
106	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,170	2,170	2,170
107	Կափույրի միջադիրի փոխարինում	6,510	6,510	6,510
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	0	0	0
108	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	4,340	4,340	4,340
109	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	4,340	4,340	4,340
110	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	21,698	21,698	21,698
111	Կցորդման ուտնակի հանում և տեղադրում	1,085	1,085	1,085
112	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	1,085	1,085	1,085
113	ՓՏ-ի հանում և տեղադրում	27,123	27,123	27,123
114	ՓՏ-ի վերանորոգում	27,123	27,123	27,123
115	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1,085	1,085	1,085
116	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	1,085	1,085	1,085
117	ՓՏ-ի յուղի փոխարինում	1,627	1,627	1,627
118	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	1,085	1,085	1,085
119	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	1,627	1,627	1,627
120	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	1,627	1,627	1,627
121	Նույնը V6-ի համար	1,627	1,627	1,627
122	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	43,397	43,397	16,274
123	Նույնը V6-ի համար	43,397	43,397	16,274
124	ԱՓՏ-ի վերանորոգում	135,615	135,615	27,123
125	ԱՓՏ-ի համակարգչի նորոգում	16,274	16,274	5,425
126	Նույնը V6-ի համար	16,274	16,274	16,274
127	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	5,425	5,425	5,425
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	0	0	0
128	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0	0	0
129	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0	0	0
130	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	0	0	0
131	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	0	0	0
132	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում վերանորոգումով	0	0	0
133	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	0	0	0
134	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	0	0	0
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0	0	0
135	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	5,425	5,425	5,425
136	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	5,425	5,425	5,425
137	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	5,425	5,425	5,425
138	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	5,425	5,425	5,425
139	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	5,425	5,425	5,425
	7. Կախոց	0	0	0
140	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում	13,562	13,562	13,562
141	Տրավերսի հանում և տեղադրում	13,562	13,562	13,562
142	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	6,510	6,510	6,510
143	Անվակունդի չափկալի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	3,255	3,255	3,255
144	Անվակունդի առանցքակալի փոխարինում	7,594	7,594	7,594
145	Անվակունդի փոխարինում	7,594	7,594	7,594
146	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	7,594	7,594	7,594
147	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	4,340	4,340	4,340

149	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	4,340	4,340	4,340
150	Ջսպանակի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
151	Ջսպակի հանում և տեղադրում	0	0	0
152	Ջսպակի վռանների փոխարինում	0	0	0
153	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4,882	4,882	4,882
154	Ներքևի լծակի հանում և տեղադրում	5,967	5,967	5,967
155	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5,967	5,967	5,967
156	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	4,882	4,882	4,882
157	Միջին ձգանի հանում և տեղադրում	4,882	4,882	4,882
158	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
159	Վերևի լծակի հանում և տեղադրում	5,967	5,967	5,967
160	Վերևի լծակի վռանների փոխարինում	5,967	5,967	5,967
161	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում	5,967	5,967	5,967
162	Գնդե հողակապերի փոխարինում	4,882	4,882	4,882
163	Ծայրականների հանում և տեղադրում	4,882	4,882	4,882
164	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3,255	3,255	3,255
165	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	3,797	3,797	3,797
166	Առջևի կայունարարի կանգնակների փոխարինում	3,797	3,797	3,797
167	Հետևի զսպանակի փոխարինում	4,882	4,882	4,882
168	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
169	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
170	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
171	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	4,882	4,882	4,882
172	Սայլենտ բլոկի փոխարինում	4,882	4,882	4,882
173	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
174	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	3,797	3,797	3,797
175	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
176	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	3,797	3,797	3,797
177	Անվաքացքի կարագավորում	3,797	3,797	3,797
178	Հետևի վերևի գնդե հողակապի փոխարինում	3,797	3,797	3,797
179	Հետևի կախոցի գնդե հողակապի վերանորոգում	2,712	2,712	2,712
180	Հետևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	10,849	10,849	10,849
181	Հետևի կախոցի անվաքացքի կարագավորում	3,797	3,797	3,797
182	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1,627	1,627	1,627
	8. Ղեկային մեխանիզմ	0	0	0
183	Ղեկային կալունի հանում և տեղադրում	16,274	16,274	16,274
184	Նույնը V6-ի համար	16,274	16,274	2,712
185	Ղեկային կալունի վերանորոգում	37,972	37,972	37,972
186	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	3,797	3,797	3,797
187	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
188	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	8,679	8,679	8,679
189	Նույնը DOHC դեպքում	8,679	8,679	2,712
190	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
191	Նույնը DOHC դեպքում	3,797	3,797	3,797
192	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	3,797	3,797	3,797
193	Նույնը DOHC դեպքում	3,797	3,797	3,797
194	Նույնը կոնդիցիոների դեպքում	3,797	3,797	3,797
195	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	8,679	8,679	8,679
196	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	21,698	21,698	21,698
197	Ղեկային ձողի փոխարինում	4,882	4,882	4,882
198	Ղեկային ձողի ծայրակալների փոխարինում	3,797	3,797	3,797
199	Ղեկային ճոճանակի նորոգման կոմպլեկտի փոխարինում	542	542	542
	9. Արգելակային համակարգ	0	0	0
200	Գլխ. գլանի հանում և տեղադրում	4,340	4,340	4,340
201	Գլխ. գլանի վերանորոգում	4,340	4,340	4,340
202	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	4,882	4,882	4,882
203	Բանվ. գլանի հանում և տեղադրում	4,340	4,340	4,340
204	Բանվ. գլանի վերանորոգում	4,340	4,340	4,340
205	Արգելակային համակարգի օդահանում	1,627	1,627	1,627
206	Առջևի սպասարկի հանում և տեղադրում	3,255	3,255	3,255

208	Առջևի սուլպպորտի վերանորոգում	3,255	3,255	3,255
209	Ջետկի սուլպպորտի վերանորոգում	3,255	3,255	3,255
210	Արգելակային փողրակի փոխարինում	3,797	3,797	3,797
211	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3,255	3,255	3,255
212	Ջետկի սկավառակային կոճղակների փոխարինում	3,255	3,255	3,255
213	Ջետկի կոճղակների փոխարինում	3,255	3,255	3,255
214	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3,797	3,797	3,797
